



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2019 թվականի  
Թիվ 143-Ա, քաղաք Երևան

### «ԱԼԿՈ ԻՄՊՈՐՏ ԷՔՍՊՈՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի հոկտեմբերի 22-ի դռնբաց նիստում քննարկեց «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Հանձնաժողովը 2019 թվականի հուլիսի 26-ին Պետական եկամուտների կոմիտեից ստացել է գրություն, որում նշվում է, որ վերջինս ստացել է Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության գրությունը՝ «Օմսկվինպրոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Օմսկվինպրոմ» ընկերություն) տնօրենի դիմումն ու կից նյութերն առ այն, որ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում խախտվում են «Օմսկվինպրոմ» ընկերության հեղինակային իրավունքները, մասնավորապես՝ Ընկերության կողմից արտադրվում և իրացվում են «Օմսկվինպրոմ» ընկերությանը պատկանող «ՈՂԻՆՆԵՐՈՎ» և «ԲԵԼԱՅ ԲԵՐԵՅԿԱ» ապրանքային նշաններով օղիներին մոլորեցնելու չափ նմանվող օղիներ:

Պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցների կողմից պարզվել է, որ Ընկերությունը երկրորդային շուկայից ձեռքբերելով «Օմսկվինպրոմ» ընկերության կողմից արտադրվող «ՈՂԻՆՆԵՐՈՎ» և «ԲԵԼԱՅ ԲԵՐԵՅԿԱ» օղիների տարաները /շերտ/ դրանք շալցրել է իր կողմից արտադրված օղիներով, այնուհետև շերտի վրա փակցվել են ակցիզային դրոշմանիշներ՝ «Տեղական» նշագրումով և հայաֆիկացման համար նախատեսված ինքնակաչուն թերթիկներ՝ Ընկերության կողմից արտադրված լինելու վերաբերյալ նշումով, որից հետո իրացվել են: Ընկերության կողմից նման ապրանքային նշաններով օղիներ շալցնելու և իրացնելու հանգամանքը հաստատվել է ինչպես գնորդ անհատ ձեռնարկատերերի հայտարարություններով, այնպես էլ Ընկերության կողմից տրամադրված տեղեկանքով:

Նկատի ունենալով, որ առերևույթ առկա են Օրենքի 12-րդ հոդվածի խախտումներ, ուստի Պետական եկամուտների կոմիտեն ուղարկել է վերջինիս մոտ առկա նյութերը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ընթացքը տալու համար:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված նյութերում առկա Ընկերության տեղեկանքի համաձայն՝ Ընկերության կողմից արտադրվել են «ՈՂԻՆՆԵՐՈՎ» և «ԲԵԼԱՅ ԲԵՐԵՅԿԱ» ապրանքային նշաններով օղիները:

Բացի այդ, Հանձնաժողովի նախագահի 2019 թվականի հուլիսի 31-ի «Հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ» թիվ 86-Ա հրամանի հիման վրա 2019 թվականի հուլիսի 31-ին անհատ ձեռնարկատեր Սերգեյ Հրանտի Աղաջանյանի (այսուհետ՝ ԱՁ Ս. Աղաջանյան) (Արմավիրի մարզ, գ. Ակնաշեն) մոտ՝ Արմավիրի մարզ, գ. Ակնաշեն հասցեում իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ» թիվ 86

արձանագրությունը: Նշված հսկիչ գնման արդյունքում գնվել է «БЕЛАЯ БЕРЕЗКА» անվանումով օդի՝ 0.5 լիտր տարողությամբ, 1 շիշ, 1 000 ՀՀ դրամ արժեքով (արտադրող՝ Ընկերություն): Իրականացված հսկիչ գնման արդյունքում Ընկերության կողմից արտադրված «ПЯТЬ ОЗЕР» մակնշմամբ օդի չի հայտնաբերվել:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) պաշտոնական կայքի (aipr.am) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «БЕЛАЯ БЕРЕЗКА БЕЛАЯ БЕРЫОЗКА» ապրանքային նշանների իրավատերն է հանդիսանում «ԿՊՕ Մարքեթինգ Քամփնի Լիմիթիդ» ընկերությունը: «БЕЛАЯ БЕРЕЗКА БЕЛАЯ БЕРЫОЗКА» ապրանքային նշանները գրանցված են 2011 թվականի մայիսի 30-ին (գրանցման հերթական համարները՝ 17004 և 17005) համապատասխանաբար 32-րդ, 33-րդ և 16-րդ, 21-րդ, 32-րդ 33-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար: Բացի այդ, ուսումնասիրվել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության պաշտոնական կայքը (wipo.int), որի արդյունքում պարզվել է, որ «FIVE LAKES CYPRUS» LTD ընկերության կողմից միջազգային ընթացակարգով գրանցվել և Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն են ստացել թիվ 1012166 և 1473994 գրանցման համարներով բառային և թիվ 1043208 գրանցման համարով գրանցված պատկերային ապրանքային նշաններ: Նշված ապրանքային նշանները պահպանվում են ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ըստ՝ Նիցցայի դասակարգչի) 33-րդ դասում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Ընկերության կողմից «ПЯТЬ ОЗЕР» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններն օգտագործելը հնարավոր է, որ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, Հանձնաժողովը 2019 թվականի օգոստոսի 9-ի ««Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 95-Ա որոշման (այսուհետ՝ թիվ 95-Ա որոշում) հիման վրա հարուցել է վարչական վարույթ: (այսուհետ՝ Վարչական վարույթ):

Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի օգոստոսի 2-ի թիվ ԳԳ-1612 (այսուհետ՝ թիվ ԳԳ-1612) գրությամբ ԱՁ Ս. Աղաջանյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել թիվ 86-Ա հրամանի հիման վրա հսկիչ գնմամբ ձեռքբերված «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանով օդու ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Ի պատասխան թիվ ԳԳ-1612 գրության՝ ԱՁ Ս. Աղաջանյանը 2019 թվականի օգոստոսի 16-ին Հանձնաժողով է ներկայացրել «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանով օդու ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթի պատճենները, որոնց համաձայն՝ ԱՁ Ս. Աղաջանյանը «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանով օդին ձեռք է բերել «Ալեքս Էնդ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (այսուհետ՝ «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերություն):

Հաշվի առնելով ԱՁ Ս. Աղաջանյանի ներկայացրած տեղեկատվությունն առ այն, որ ԱՁ Ս. Աղաջանյանը «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանով օդին ձեռք է բերել 2019 թվականի մայիսի 10-ին (ապրանքների մատակարարման հարկային հաշիվ թիվ Ա0280152895) «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերությունից՝ Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի օգոստոսի 26-ի թիվ ԳԳ-1906 գրությամբ (այսուհետ՝ թիվ ԳԳ-1906 գրություն) «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերության կողմից 2019 թվականի մայիսի 10-ին ԱՁ Ս. Աղաջանյանին մատակարարած (ապրանքների մատակարարման հարկային հաշիվ թիվ Ա0280152895) օդիների ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Ի պատասխան թիվ ԳԳ-1906 գրության՝ «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերությունը Հանձնաժողովին հայտնել է, որ «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերության կողմից 2019 թվականի մայիսի 10-ին ԱՁ Ս. Աղաջանյանին մատակարարված օդիները ձեռք են բերվել Ընկերությունից՝ 2019 թվականի մարտի 6-ին ծագած մատակարարման հարաբերությունների շրջանակներում՝ կից ներկայացնելով հարկային հաշվի պատճենը:

Վարչական վարույթի շրջանակներում բազմակողմանի ուսումնասիրություն իրականացնելու նպատակով Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի պաշտոնակատարի՝ 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ ԱՎ-1696 գրությամբ Հանձնաժողովը խնդրել է

Գործակալությանը տրամադրել ազգային և միջազգային ընթացակարգերով գրանցված և ՀՀ-ում պահպանվող «ПЯТb OЗEP» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանների վերաբերյալ տեղեկատվություն՝ կցելով գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները (հնարավորության դեպքում՝ նաև հայերենով տարբերակները), որին ի պատասխան Գործակալությունը հայտնել է, որ միջազգային ընթացակարգով իրավական պահպանություն են ստացել «ПЯТb OЗEP» բառերը պարունակող միջազգային գրանցման թիվ 1043208 (իրավական պահպանության թվական՝ 19.02.2019) և թիվ 1473994 (իրավական պահպանության թվական՝ 13.02.2019) միջազգային գրանցման հերթական համարներ ունեցող ապրանքային նշանները «Five Lakes Cyprus Ltd.» կիպրական ընկերության անվամբ:

Միջազգային ընթացակարգով իրավական պահպանություն է ստացել «БЕЛАЯ БЕРЕЗКА» բառերը պարունակող միջազգային գրանցման թիվ 1177100 (իրավական պահպանության թվական՝ 09.07.2013) և ազգային ընթացակարգով գրանցվել են թիվ 17005 և թիվ 17004 ապրանքային նշանները «ԿՊՈ Մարքետինգ Քամփնի Լիմիթիդ» կիպրական ընկերության անվամբ: Կցվել են նաև ապրանքային նշանների պետական գրանցամատյանից քաղվածքները, իսկ հայերեն տարբերակով քաղվածքների տրամադրումը հնարավոր չէ, քանի որ ապրանքային նշանների գրանցման միջազգային հիմնապաշարի պաշտոնական լեզուները անգլերենն ու ֆրանսերենն են:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի պաշտոնակարի՝ 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ ԱՎ-1697 գրությամբ Հանձնաժողովը խնդրել է Գործակալությանը տրամադրել Ընկերության անվամբ ազգային և միջազգային ընթացակարգերով գրանցված և ՀՀ-ում իրավական պահպանության ենթակա բոլոր ապրանքային նշանների գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները (հնարավորության դեպքում՝ նաև հայերենով տարբերակները), որին ի պատասխան Գործակալությունը հայտնել է, որ Ընկերության անունով ապրանքային նշաններ գրանցված չեն:

Բացի այդ, Հանձնաժողովի նախագահի 2019 թվականի օգոստոսի 26-ի թիվ ԳԳ-1907 գրությամբ (այսուհետ՝ թիվ ԳԳ-1907 գրություն) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել «ПЯТb OЗEP» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանների օգտագործման թույլտվությունը հիմնավորող փաստաթղթի պատճենը:

Ի պատասխան թիվ ԳԳ-1907 գրության՝ Ընկերությունը հայտնել է, որ «ПЯТb OЗEP» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանների օգտագործման թույլտվություն չունի, հետևաբար չի կարող Հանձնաժողով ներկայացնել նման թույլտվությունը հիմնավորող որևէ փաստաթուղթ:

Բացի այդ, Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի՝ 2019 թվականի օգոստոսի 29-ի թիվ ՀԿ-1930 գրությամբ (այսուհետ՝ թիվ ՀԿ-1930 գրություն) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝ Ընկերության կողմից «ПЯТb OЗEP» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օդիների շրջանառության ոլորտում իրականացված գործունեության, այն տնտեսվարող սուբյեկտների անվանումների, որոնց միջոցով 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն, ինչպես նաև 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է «ПЯТb OЗEP» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օդիների իրացումը և նշված ժամանակահատվածում «ПЯТb OЗEP» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օդիների ծավալների՝ արտահայտված լիտր/շիշ ձևաչափով (ըստ շի տարողության), նույն ժամանակահատվածում Ընկերության կողմից «ПЯТb OЗEP» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օդիների իրացումից ստացված հասույթի չափի, ինչպես նաև նույն ժամանակահատվածում Ընկերության կողմից «ПЯТb OЗEP» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օդիների իրացումից ստացված զուտ շահույթի չափի վերաբերյալ տեղեկատվություն:

Ի պատասխան թիվ ՀԿ-1930 գրության՝ Ընկերությունը Հանձնաժողովին հայտնել է, որ պահանջվող տեղեկատվությունը խնդրարկվող ժամանակահատվածում տրամադրել չի կարող, քանի որ տեղեկատվությունն ամբողջությամբ տրամադրելու համար պահանջվում է Ընկերության մի քանի աշխատակիցների համատեղ աշխատանքը, որոնցից ոմանք գտնվում են ամենամյա արձակուրդում: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Հանձնաժողովին

հնարավորինս ամբողջական տեղեկատվության և այն հիմնավորող փաստաթղթերի (հաշվի առնելով նաև տեղեկատվության ծավալուն լինելը) տրամադրման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին տեղեկատվությունը պահանջվող ժամանակահատվածում տրամադրելու անհնարինության պատճառները համարել հարգելի և Ընկերությանը տրամադրել ևս 5 (հինգ) աշխատանքային օր՝ պահանջվող տեղեկատվությունը և հիմնավորող փաստաթղթերը Հանձնաժողով ներկայացնելու համար:

Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԳԳ-2032 գրությամբ Հանձնաժողովը Ընկերությանը հնարավորություն է տվել թիվ ՀԿ-1930 գրությամբ պահանջվող տեղեկատվությունը ներկայացնել մինչև 2019 թվականի սեպտեմբերի 18-ը ներառյալ:

Ի պատասխան թիվ ՀԿ-1930 գրության՝ Ընկերությունը Հանձնաժողովին հայտնել է, որ Ընկերությունը «ՈՂԻՆԵՐ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օղիներ արտադրել է շատ քիչ խմբաքանակով՝ մոտ 100 (հարյուր) շիշ, ինչն էլ Հանձնաժողովի գրությունը ստանալուց անմիջապես հետո դադարեցվել է: Ընկերությունը նշել է, որ «ՈՂԻՆԵՐ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օղիները վաճառվել են մանրածախ եղանակով, և այլ տնտեսվարող սուբյեկտները ենթադրաբար «ՈՂԻՆԵՐ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օղիները գնել են այդ եղանակով և իրացրել: Ընկերությունը նշել է նաև, որ պահանջվող ժամանակահատվածում Ընկերության կողմից ապրանքի վերաբերյալ լիտր/շիշ ձևաչափով հաշվառում չի իրականացվել, ուստի կոնկրետ ապրանքի ծավալների վերաբերյալ տեղեկատվություն ընկերությունը չի կարող տրամադրել: Ընկերությունը հայտնել է նաև, որ վերջինիս ընդհանուր հասույթը արտադրված ամբողջ օղու գծով 2018 թվականին կազմել է  
«Ն դրամ,  
իսկ 2019 թվականի առաջին կիսամյակի համար՝

«Ն դրամ: Միաժամանակ Ընկերությունը չի ներկայացրել այն տնտեսվարող սուբյեկտների անվանումները, որոնց միջոցով իրականացվել է վերը նշված ապրանքների իրացումը, ինչպես նաև հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Բացի այդ, Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի՝ 2019 թվականի օգոստոսի 29-ի թիվ ՀԿ-1935 գրությամբ (այսուհետ՝ թիվ ՀԿ-1935 գրություն) Հանձնաժողովը դիմել է Պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել տեղեկատվություն՝ Ընկերության 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածում հասույթի չափի, նույն ժամանակահատվածում Ընկերության կողմից օղիների (առկայության դեպքում՝ «ՈՂԻՆԵՐ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օղիների արտադրության ծավալները՝ առանձնացված) արտադրության ծավալների՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ, նույն ժամանակահատվածում Ընկերության կողմից «ՈՂԻՆԵՐ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օղիների իրացման ծավալների՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ, նույն ժամանակահատվածում Ընկերության կողմից «ՈՂԻՆԵՐ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օղիների իրացումից ստացված հասույթի չափի և նույն ժամանակահատվածում Ընկերության կողմից «ՈՂԻՆԵՐ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օղիների իրացումից ստացված զուտ շահույթի չափի վերաբերյալ:

Ի պատասխան թիվ ՀԿ-1935 գրության՝ «Ն պետական եկամուտների կոմիտեն՝ 2019 թվականի հոկտեմբերի 1-ի գրությամբ հայտնել է, որ 2018 թվականին Ընկերության կողմից արտադրված օղիների իրացումը կազմել է հատ՝ ընդհանուր «Ն դրամ արժեքով, որից հատ՝ «Ն դրամ արժեքով (ներառյալ ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը) օղիների իրացումը իրականացվել է հարկային հաշիվների միջոցով, իսկ հատ՝ «Ն դրամ արժեքով (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) օղիների իրացումը իրականացվել է հաշվիչ դրամարկղային մեքենայի միջոցով; «Ն պետական եկամուտների կոմիտեն ներկայացրել է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության «Ապրանքների, այդ թվում օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ» հաշվետվությունները, որոնց համաձայն՝ Ընկերությունը նշված ժամանակահատվածում արտադրել է լիտր և իրացրել լիտր «ակոհոլային խմիչքներ թորած» ապրանք, որի իրացման շրջանառությունը կազմել է

ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը), ինչպես նաև Ընկերության հասույթը 2018 թվականին կազմել է

ՀՀ դրամ, իսկ 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝

ՀՀ դրամ:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի հոկտեմբերի 2-ին տեղի է ունեցել Հանձնաժողովի դռնբաց նիստ, որի ընթացքում քննարկվել է թիվ 95-Ա որոշմամբ Ընկերության կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) հնարավոր խախտման վերաբերյալ հարուցված վարչական վարույթում առկա փաստական հանգամանքների վերաբերյալ հարցը: Մինչդեռ նշված նիստին Ընկերության որևէ ներկայացուցիչ չի մասնակցել՝ չնայած այն հանգամանքին, որ պատշաճ ծանուցված է եղել Հանձնաժողովի նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին:

Բացի այդ, Հանձնաժողովի նախագահի 2019 թվականի հոկտեմբերի 21-ի «Հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ» թիվ 145-Ա հրամանի հիման վրա 2019 թվականի հոկտեմբերի 21-ին «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Սիթի» ընկերության) (ք. Երևան, Օհանովի 15/1) մոտ՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 10 հասցեում իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ» թիվ 145 արձանագրությունը: Նշված հսկիչ գնման արդյունքում գնվել է «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանով օղի՝ 0.5 լիտր տարողությամբ, 1 շիշ, 2 660 ՀՀ դրամ արժեքով, ինչպես նաև «ПЯТЬ ОЗЕР» ապրանքային նշանով օղի՝ 0.5 լիտր տարողությամբ, 1 շիշ, 1 690 ՀՀ դրամ արժեքով:

Հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների ուսումնասիրությունից պարզվել է, որ «БЕЛАЯ БЕРЕЗКА» և «ПЯТЬ ОЗЕР» ապրանքային նշաններով օղիները արտադրվել և շաղկվել են՝ «Օմսկվինպրոմ» ընկերության կողմից և ՀՀ ներմուծվել են «Սովանո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների և դիրքորոշումների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով շփոթության առաջացում է համարվում՝

1) գրանցված ապրանքային կամ սպասարկման նշանին կամ արդյունաբերական նմուշին շփոթության աստիճանի նման չգրանցված ապրանքային կամ սպասարկման նշանի կամ արդյունաբերական նմուշի օգտագործումը:

3) գրանցված ապրանքային կամ սպասարկման նշանին կամ արդյունաբերական նմուշին նույնական ապրանքային կամ սպասարկման նշանի կամ արդյունաբերական նմուշի օգտագործումն առանց իրավատիրոջ համաձայնության:

5) ապրանքի արտաքին տեսքի, օրինակ՝ ապրանքի փաթեթավորման, գույնի կամ այլ ոչ ֆունկցիոնալ բնութագրերի նկատմամբ շփոթություն առաջացնող գործողությունները կամ վարքագիծը:

Գործակալության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության, Գործակալության պաշտոնական կայքէջի, Մտավոր սեփականության համաշխարհային

կազմակերպության պաշտոնական կայքէջի և համապատասխան փաստաթղթերի համաձայն՝ «Five Lakes Cyprus Ltd.» կիպրական ընկերության անվամբ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) 33-րդ դասի ապրանքների համար միջազգային ընթացակարգով գրանցվել է պատկերային «ՍՐԿՆ ՕՅԵՐ» (թիվ 1043208) ապրանքային նշանը, որը իրավական պահպանություն է ստացել Հայաստանի Հանրապետությունում:

Բացի այդ, «ԿՊՈ Մարքետինգ Քամփնի Լիմիթիդ» («KPO MARKETING COMPANY LIMITED») կիպրական ընկերության անվամբ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) 33-րդ դասի ապրանքների համար միջազգային ընթացակարգով գրանցվել է «БЕЛАЯ БЕРЕЗКА» պատկերային թիվ 1177100 ապրանքային նշանը, որը իրավական պահպանություն է ստացել Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև ազգային ընթացակարգով գրանցվել են բառային «БЕЛАЯ БЕРЕЗКА» (թիվ 17004) և պատկերային «БЕЛАЯ БЕРЕЗКА» (թիվ 17005) ապրանքային նշանները:

Վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների, Ընկերության կողմից, ինչպես նաև Գործակալության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության անվամբ ապրանքային նշաններ (այդ թվում՝ «ՍՐԿՆ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշան) գրանցված չեն, և Ընկերությունը «ՍՐԿՆ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանների օգտագործման թույլտվություն չունի:

Հանձնաժողովն ամրագրում է, որ Ընկերության կողմից օգտագործված և չգրանցված «БЕЛАЯ БЕРЕЗКА» բառային ապրանքային նշանը նույնական է գրանցված և Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության ենթակա «БЕЛАЯ БЕРЕЗКА» (թիվ 17004) բառային ապրանքային նշանին: Հանձնաժողովն ամրագրում է նաև, որ Ընկերության կողմից օգտագործվող «ՍՐԿՆ ՕՅԵՐ» պատկերային ապրանքային նշանը շփոթության աստիճանի նման է գրանցված պատկերային «ՍՐԿՆ ՕՅԵՐ» (թիվ 1043208) ապրանքային նշանին, իսկ «БЕЛАЯ БЕРЕЗКА» պատկերային ապրանքային նշանը շփոթության աստիճանի նման է գրանցված պատկերային «БЕЛАЯ БЕРЕЗКА» (թիվ 17005) ապրանքային նշանին, ինչպես նաև պատկերային «БЕЛАЯ БЕРЕЗКА» (թիվ 1177100) ապրանքային նշանին: Մասնավորապես, շփոթության աստիճանի նման են ապրանքային նշանների արտաքին տեսքը, առկա գրառումները և պատկերները:

Բացի այդ, շփոթության աստիճանի նման են «Օմսկվինպրոմ» ընկերությանը պատկանող «ՍՐԿՆ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով արտադրված ապրանքների և Ընկերության կողմից արտադրված ապրանքների արտաքին տեսքը, մասնավորապես՝ շի արտաքին տեսքը, չափը, շի վրա առկա գրառումները և պատկերները, ինչի արդյունքում մեծանում է նշված ապրանքների միջև շփոթության առաջացման հավանականությունը:

Ընկերության կողմից վերոնշյալ ապրանքների իրացման ծավալների վերաբերյալ հարկ է նշել, որ Ընկերությունը պատշաճ չի ներկայացրել Հանձնաժողովի նախագահի 2019 թվականի օգոստոսի 29-ի թիվ ՀԿ-1930 գրությամբ պահանջված տեղեկատվությունը, այդ թվում՝ այն տնտեսվարող սուբյեկտների անվանումները, որոնց միջոցով իրականացվել է վերը նշված ապրանքների իրացումը, ինչպես նաև հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Այսպիսով, Հանձնաժողովն ամրագրում է, որ Ընկերության՝ սույն որոշմամբ նկարագրված գործողություններն ու վարքագիծը համարվում են անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ շփոթության առաջացում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն ստացած «БЕЛАЯ БЕРЕЗКА» (թիվ 17004) ապրանքային նշանին նույնական «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանի օգտագործումն Ընկերության կողմից առանց իրավատիրոջ համաձայնության համարվում է Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի խախտում, «ՍՐԿՆ ՕՅԵՐ» (թիվ 1043208) ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման «ՍՐԿՆ ՕՅԵՐ» պատկերային ապրանքային նշանի, ինչպես նաև «БЕЛАЯ БЕРЕЗКА» (թիվ 17005) և «БЕЛАЯ БЕРЕЗКА» (թիվ 1177100) պատկերային ապրանքային նշաններին շփոթության աստիճանի նման «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանների օգտագործումը՝ Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի խախտում, իսկ «Օմսկվինպրոմ» ընկերությանը պատկանող «ՍՐԿՆ ՕՅԵՐ» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օրինների շի արտաքին տեսքի կրկնությունը համարվում է Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի խախտում:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի խախտման դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) տնտեսվարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության գործողության համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոս: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն մասով նախատեսված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև հինգ տոկոս:

Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը, ի թիվս այլնի, հաշվի է առնում հետևյալ հանգամանքերը.

- Ընկերության կողմից թույլ է տրվել անբարեխիղճ մրցակցության գործողություն, որը դրսևորվել է ինչպես գրանցված ապրանքային նշաններին նույնական և շփոթության աստիճանի նման ապրանքային նշանների օգտագործմամբ, այնպես էլ այլ տնտեսվարող սուբյեկտի ապրանքների արտաքին տեսքի նկատմամբ շփոթություն առաջացնող գործողությամբ.

- սույն որոշմամբ նկարագրված իրավախախտումները կատարելու Ընկերության դիտավորությունը, ինչի մասին է վկայում այն հանգամանքը, որ թե Ընկերության կողմից արտադրված ապրանքների արտաքին տեսքը, թե դրանց վրա օգտագործված «ПЯТЬ ОЗЕР» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշանները նույնական են կամ շփոթության աստիճանի նման են «Օմսկվինպրոմ» ընկերության «ПЯТЬ ОЗЕР» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքների արտաքին տեսքին և գրանցված «ПЯТЬ ОЗЕР» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններին, որոնց Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության ենթակա լինելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ազգային ընթացակարգով գրանցված լինելու փաստը հանրամատչելի է, այդ մասին տեղեկատվությունն առկա է Գործակալության պաշտոնական կայքում (aipa.am) և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության պաշտոնական կայքէջում.

- Ընկերության կողմից Օրենքի խախտումների կրկնակիության հանգամանքը: Մասնավորապես Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 25-ի «Ակրո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 64-Ա որոշմամբ Ընկերության գործողությունները և վարքագիծը՝ այն է Ընկերության կողմից «ПАРЛАМЕНТ PARLAMENT» և «МЯГКОБ МЯГКОВ» ապրանքային նշաններին շփոթության աստիճանի նման «ПАРЛАМЕНТ PARLAMENT» և «МЯГКОБ» ապրանքային նշանների օգտագործումը որակվել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ շփոթության առաջացում այլ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում, հանձնարարելով՝ հետագայում բացառել Օրենքի խախտումը.

- իրավախախտումը բացասական ազդեցություն է ունեցել համապատասխան ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակի վրա, որի արդյունքում Ընկերությունը ստացել է մրցակցային առավելություններ.

- Ընկերությունն ընդունել է իրավախախտում կատարելու փաստը և հայտնել, որ Հանձնաժողովի գրությունը ստանալուց անմիջապես հետո դադարեցրել է այն.

• վարչական վարույթի ընթացքում իրականացված հսկիչ գնման արդյունքում «ՈՂԵՍ ՕՅԵՐ» ապրանքային նշանով ապրանք չի հայտնաբերվել:

Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների համադրության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել տուգանք՝ բոլոր օղիների գծով Ընկերության նախորդ տարվա հասույթի՝

«Որամի տոկոսի չափով, որը կազմում է

«Որամ՝ Ընկերության ընդհանուր հասույթի՝

«Որամի մոտ

տոկոսի չափով: Հաշվի առնելով, որ նշանակվող տուգանքը կազմում է Ընկերության ընդհանուր հասույթի մոտ տոկոսը, ինչպես նաև «Որամի» պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերության ակտիվների և պարտավորությունների մասին տրամադրված տեղեկատվությունը, հարկ է ամրագրել, որ նշանակվող տուգանքը չի կարող հանգեցնել Ընկերության սնանկացմանը կամ այլ կերպ գործունեության դադարեցմանը:

Միաժամանակ, «Սահմանադրության 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ, իսկ 11-րդ հոդվածի համաձայն՝ «Որամի» տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ փոխանակման մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովն ինքնավար մարմին է, որը նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրականացնում է տնտեսական մրցակցության պաշտպանությունը:

Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

Վերը նշված իրավանորմների համադրության և վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված Հանձնաժողովի որոշումների կատարումը բխում է հանրային շահի ապահովման անհրաժեշտությունից: Ավելին, սույն գործի հանգամանքների համատեքստում հանրային շահի առկայությունը դիտարկվում է նաև այն առումով, որ տվյալ դեպքում անբարեխիղճ մրցակցությունը գործողությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սպառողների շահերի վրա: Հետևաբար, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն որոշման անհապաղ կատարումն անհրաժեշտ է՝ ելնելով հանրային շահերից:

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով Օրենքի 1-ին, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 12-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 5-րդ կետերը, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «գ» կետերը, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 34-րդ հոդվածը, 35-րդ հոդվածը, 36-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է

1. «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ սույն որոշմամբ նկարագրված գործողություններն ու վարքագիծը որակել որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկված ապրանքների վերաբերյալ շփոթություն առաջացնելու գործողություն (այսուհետ՝ Օրենքի խախտում):



2. Օրենքի խախտման համար «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք՝ 16 207 000 (տասնվեց միլիոն երկու հարյուր յոթ հազար) ՀՀ դրամի չափով:

3. Հանձնարարել «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) 10-օրյա ժամկետում շտկել Օրենքի խախտումը՝ իրականացնելու դեպքում դադարեցնել սույն որոշմամբ նշված ապրանքների արտադրությունն ու իրացումը, իսկ առևտրային շրջանառության մեջ դրա առկայության դեպքում հետ կանչել բոլոր առևտրային օբյեկտներից.

2) 10-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել սույն որոշման 2-րդ կետով սահմանված տուգանքի վճարումը հավաստող փաստաթուղթ.

3) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված հանձնարարականը կատարելուց հետո 3-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցներ, ինչպես նաև նույն ժամկետում ներկայացնել տեղեկատվություն՝ սույն որոշմամբ նշված ապրանքները բոլոր առևտրային օբյեկտներից հետ կանչելուց հետո դրա ծավալների (մնացորդի) վերաբերյալ՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցներ.

4) հետազայում բացառել Օրենքի խախտումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա բողոքարկումը (կատարումը):

ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ